

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (5 դասաժամ), տեխնոլոգիայի (2 դասաժամ, տղաներ), քիմիայի (11,5 դասաժամ), աշխարհագրության (7,5 դասաժամ), հայոց եկեղեցու պատմության (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
 - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
 - անձը հաստատող փաստաթուղթ,
 - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն (Ձեւ 5),
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
- Փաստաթղթերն ընդունվում են 2022թ.-ի նոյեմբերի 2-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
- Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 21-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Որոտան, 2-րդ փ., 8-րդ շենք:
- Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 99-05-11 հեռախոսահամարով: